| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | **ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (7.20ՃՏՊ008)** |
| ECTS կրեդիտ | 2 կրեդիտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>*(գիտելիք և իմացություն)*<br>• նկարագրել հուշարձանների վրա փորագրված արձանագրությունների բովանդակությունը, թվագրությունը, զաղտնագրությունը և պարզ բովանդակությամբ արձանագրությունների ընթերցումը,<br>• ներկայացնել հնագիտական պեղումների նշանակությունը, մեթոդները և ճարտարապետական պեղումների առանձնահատկությունները,<br><br>*(կարողություններ)*<br>• վիմագրական և հնագիտական նյութի միջոցով ճշտել և որոշել հուշարձանի շինարարական ժամանակաշրջանը,<br>• ընթերցել և գնահատել վիմագրական ու հնագիտական նյութը,<br>• կատարել հուշարձանների տարբերակում՝ ըստ վիմական և հնագիտական նյութի,<br>• գործնականում իրականացնել վիմական պարզ արձանագրությունների բովանդակության քննություն: |
| Դասընթացի թեմատիկ ծրագիր | • Վիմագրություն և հնագիտություն առարկան: Նախնադարի պարբերացումը:<br>• Միջին դարերի հնագիտական հուշարձանների պարբերացումը: Պարբերացման հիմնական ժամանակափուլերին վերաբերող նյութական մշակույթը:<br>• Զարգացած միջնադարյան Հայաստանի վանական համալիրների գործունեության ամենատարբեր ոլորտների բացահայտումը վիմագրական նյութերի հիման վրա: |

| | |
|---|---|
| | • Հայկական վիմական արձանագրությունների գիտական վերծանության մեթոդները: Արձանագրությունների թվագրության խնդիրը:<br>• Դաշտային հնագիտական պեղումների հիմնական մեթոդները:<br>• Տարաբնույթ հնագիտական հուշարձանների պեղումները: Գտածոների հաշվառում և նախնական կոնսերվացում: Բացված հուշարձանների գրանցում: Դաշտային փաստաթղթերի կազմում: Քարտեզագրում: |
| Դասընթացի գրականության ցանկ | • Գրիգորյան Գ.Մ. Հայաստանի վիմագրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ , 2000թ., 205 էջ:<br>• Арциховский А.В. “Основы археологии” \\2-е издание – Москва: Государственное издательство политической литературы, 1955г. - 275с.<br>• Гуревич Л.Л. Методы археологических обмеров и обмерная документация в Пенджикентской археологической экспедиции. - Ленинград: КСИА, 1977г. - 148с. |